# ITP-ն և Դուք

Անհատական անցումային պլանի (ITP) մասին տեղեկատվական ուղեցույց 14 և ավելի բարձր տարիքի կամ մինչև 9-րդ դասարան հասած աշակերտների և նրանց ընտանիքների համար

Հատուկ կրթության վարչություն
Վերանայվել է 2024 թ. դեկտեմբերին

Ծնողներ/խնամակալներ և աշակերտներ,

Այս ուղեցույցի նպատակն է՝ տեղեկություններ տրամադրել հաշմանդամություն ունեցող աշակերտների (14 տարեկանից կամ մինչև 9-րդ դասարան) անցումային ծառայությունների վերաբերյալ: Ուղեցույցը ծառայում է որպես գործիք այն աշակերտների համար, որոնք մասնակցում են իրենց Անհատական կրթական ծրագրի (IEP) մասը կազմող Անհատական անցումային ծրագրի (ITP) մշակմանը: Որպես IEP թիմի անդամներ՝ աշակերտները կմասնակցեն կարևոր որոշումների կայացմանը՝ հետմիջնակարգ նպատակները պլանավորելիս՝ ուսման և/կամ վերապատրաստման, աշխատանքի և, համապատասխան դեպքերում, ինքնուրույն ապրելու ոլորտներում: Հուսով ենք, որ այս նյութը օգտակար կլինի ավագ դպրոցից հետո կյանքը պլանավորելիս:

Խորհուրդ ենք տալիս IEP թիմի հանդիպումից առաջ կարդալ այս և «IEP-ն և Դուք» ուղեցույցները: Կարևոր է նաև աչքի անցկացնել *Հատուկ կրթության ծառայությունների ծնողական ուղեցույցը (ներառյալ Ընթացակարգային իրավունքներն ու երաշխիքները)*, որը ստացել եք IEP թիմի հանդիպման մասին ծանուցման հետ:

Եթե հարցեր ունեք IEP-ի, ITP-ի, հատուկ կրթության կամ այս գրքույկում տեղ գտած տեղեկությունների վերաբերյալ, խոսեք ձեր դպրոցի անցումային ուսուցչի հետ կամ այցելեք Անցումային ծառայությունների վեբկայքի շրջանային գրասենյակ https://sped.lausd.org/dots հասցեով:

Հատուկ կրթության վարչություն

Անցումային ծառայությունների շրջանային գրասենյակ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ են անցումային ծառայությունները ..... 5

Ի՞նչ է անցումային պլանավորումը ..... 5

Ի՞նչ է անհատական անցումային պլանը (ITP) ..... 5

Անցումային պլանավորման փուլերը ..... 6

Ովքե՞ր են IEP թիմի հանդիպման մասնակիցները ..... 7

Որքա՞ն կարևոր է աշակերտի մասնակցությունը ..... 8

Որքա՞ն կարևոր է ծնողի/խնամակալի մասնակցությունը ..... 8

Որո՞նք են ITP-ի բաղադրիչները ..... 9

Ի՞նչ է անցումային գնահատումը ..... 10

Ի՞նչ են հետմիջնակարգ նպատակները ..... 10

Ի՞նչ են անցումային միջոցառումները ..... 10

Ինչպե՞ս է համայնքը կապված ITP-ի հետ ..... 11

Որքա՞ն ժամանակ կարող է աշակերտը անցումային ծառայություններ ստանալ ..... 12

Որո՞նք են դիպլոմ ստանալու ավարտական պահանջները ..... 12

Ի՞նչ է լինում, եթե աշակերտը չի բավարարում դիպլոմ ստանալու ավարտական պահանջները .. 13

Ի՞նչ է արդյունքների ամփոփագիրը ..... 14

Ի՞նչ ռեսուրսներ են հասանելի, եթե ես հավելյալ հարցեր ունեմ ..... 15

IEP-ի ժամանակացույցը ..... 16

## Ի՞ՆՉ ԵՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցումային ծառայությունները միջոցառումների համակարգված ամբողջություն են, որոնց նպատակն է՝ օգնել հաշմանդամություն ունեցող աշակերտներին և նրանց ընտանիքներին պատրաստվել կյանքին՝ ավագ դպրոցի ավարտից հետո: Դպրոցն ավարտելուց հետո շրջանավարտը կարող է զբաղվել մասնագիտական ուսուցմամբ, ընդունվել քոլեջ, աշխատել, ապրել ինքնուրույն՝ պետական կառույցների աջակցությամբ կամ առանց աջակցության: Անցումային միջոցառումները, հաշվի առնելով աշակերտի ուժեղ կողմերը, նախասիրությունները, հետաքրքրությունները և պահանջմունքները, մշակվում են տարիքին համապատասխան գնահատումների արդյունքների հիման վրա: Այս գնահատումների արդյունքները օգնում են IEP թիմերին մշակել հետդպրոցական պատշաճ նպատակներ կրթության և/կամ մասնագիտական ուսուցման, զբաղվածության և, անհրաժեշտության դեպքում, ինքնուրույն ապրելու հմտությունների բնագավառներում:

## Ի՞ՆՉ Է ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Աշակերտները պետք է վաղ փուլից սկսեն պլանավորել իրենց ապագան՝ ծնողների/խնամակալների օգնությամբ: Թեև ITP-ի քննարկումը սկսվում է 14 տարեկանում կամ մինչև 9-րդ դասարան, երբեք շուտ չէ մտածել և քայլեր ձեռնարկել մեծահասակ կյանքում ինքնուրուևության և հաջողության հասնելու ուղղությամբ: Ընտանիքում կարող են քննարկվել այսպիսի հարցեր. ինչո՞վ է զբաղվելու աշակերտը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո: Գնալու է քոլե՞ջ, թե՞ արհեստագործական դպրոց: Աշխատելու է աջակցվող զբաղվածության ծրագրո՞ւմ, թե՞ մրցակցային աշխատանք է գտնելու: Ապրելու է ինքնուրո՞ւյն, թե՞ շարունակելու է ապրել ընտանիքի հետ: Արդյո՞ք այլ կառույցների օգնության կարիք կլինի այս ծրագրերն իրականացնելու համար: Մինչև աշակերտի 14 տարին լրանալը կամ մինչև 9-րդ դասարան ITP-ն պետք է ներառի միջոցառումներ, որոնք կօգնեն նրան միջնակարգ դպրոցից անցում կատարել մեծահասակի կյանքին: Այս գործընթացը կոչվում է անցումային պլանավորում:

## Ի՞ՆՉ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԼԱՆԸ

Անցումային պլանավորումը գրանցվում է IEP-ի «ITP» կոչվող բաժնում: IEP-ի «ITP» բաժինը վերստուգվում և վերանայվում է տարեկան առնվազն մեկ անգամ՝ IEP թիմի հանդիպման շրջանակում:

ITP-ի նպատակն է՝ օգնել աշակերտին պլանավորել իր կյանքը դպրոցից հետո: Դա կարող է նշանակել՝

- հետմիջնակարգ կրթություն (2 կամ 4-ամյա քոլեջ կամ համալսարան),
- մասնագիտական ուսուցման ծրագրեր (գործնական ուսուցում՝ վկայական ստանալու նպատակով),
- աջակցվող կամ մրցակցային զբաղվածություն,
- ինքնուրույն կյանք,
- մասնակցություն համայնքային կյանքին:

# ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

## 14-րդ տարեկանից առաջ կամ մինչև 9-րդ դասարան

Աշակերտի ուժեղ կողմերը, նախասիրությունները, հետաքրքրություններն ու պահանջմունքները սահմանվում են իր տարիքին համապատասխան գնահատումների միջոցով, որոնք ներկառուցված են ուսումնական ծրագրում: Այնուհետև դրանք գրանցվում են ITP-ում՝ IEP թիմի տարեկան հանդիպման ժամանակ:

## Հետմիջնակարգ նպատակների սահմանում

Հետմիջնակարգ նպատակները սահմանվում են աշակերտի հետաքրքրությունների գնահատման հիման վրա՝ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո: Չափելի հետմիջնակարգ նպատակները գրանցվում են ITP-ում:

## Անցումային միջոցառումներ

Կրթության և/կամ ուսուցման, զբաղվածության և, անհրաժեշտության դեպքում, ինքնուրույն կյանքի հմտությունների ոլորտներում իրականացվող անցումային միջոցառումներն օգնում են աշակերտներին հասկանալ հետմիջնակարգ կրթության տարբերակների միջև եղած տարբերությունները, ծանոթանալ աշխատանքի հմտություններին և կարիերայի ուղիներին և կարող են ներառել ուշադրություն ինքնուրույն կյանքի հասնելու համար անհրաժեշտ հմտությունների զարգացման վրա:

## Չափահասության տարիք

Աշակերտի 18-ամյակից առաջ ընտանիքը տեղեկացվում է «չափահասության տարիքի» մասին: 18 տարեկանում կրթական որոշումների իրավունքը փոխանցվում է աշակերտին: IEP թիմը պարտավոր է այդ մասին տեղեկացնել ծնողներին/խնամակալներին և աշակերտին: Այս տեղեկացումը IEP-ում գրանցվում է առնվազն մեկ տարի առաջ:

***ՀՈՒՇՈՒՄ.***
***ծնողները/խնամակալները և աշակերտները պետք է նախապես սկսեն հասկանալ «չափահասության տարիքի» իրավունքներն ու պարտականությունները:***

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ IEP ԹԻՄԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Աշակերտները և ընտանիքները IEP թիմի կարևոր անդամներ են: Երբ IEP թիմի հանդիպման ընթացքում նախատեսվում է մշակել ITP, աշակերտը պետք է հրավիրվի հանդիպմանը: Դա կատարվում է՝ աշակերտի անունը ներառելով Անհատականացված կրթական ծրագրի (IEP) հանդիպմանը մասնակցելու ծանուցման ձևում: ITP-ի շրջանակում ծնողներին/խնամակալներին և աշակերտին ամեն տարի հարցնում են՝ արդյոք կան կողմնակի կազմակերպություններ, որոնք ներկայումս աշակերտին տրամադրում են կամ ապագայում տրամադրելու են անցումային ծառայություններ, և արդյոք տրվում է թույլտվություն՝ հաջորդ տարի այդ կազմակերպությանը հրավիրելու համար:

## ՊԱՐՏԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

**Ծնող կամ խնամակալ**

Ճանաչում է աշակերտի ուժեղ կողմերը, պահանջմունքներն ու առանձնահատկությունները:

**Դպրոցի ադմինիստրատոր**

Տիրապետում է հատուկ կրթության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությանը և ունի շրջանի ռեսուրսները տրամադրելու լիազորություն:

**Հատուկ կրթության ուսուցիչ**

Կրթական մասնագետ, որը գիտելիքներ ունի աշակերտի հաշմանդամության և աշակերտի առաջընթացի վրա դրա ազդեցության մասին:

**Ընդհանուր ուսուցիչ**

Ընդհանուր կրթության ուսուցիչ, որը իրականացնում է հիմնական ուսուցումը և անհրաժեշտ հարմարեցումներն ու փոփոխությունները:

**Շրջանի որակավորված մասնագետ**

Կբացատրի գնահատման արդյունքները և կօգտագործի դրանք ուսուցումը պլանավորելու համար: Կարող է լինել գնահատող, հարակից ծառայություններ տրամադրող կամ նման թիմի անդամ:

## ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

**Այլ իրազեկ մասնակիցներ**

Այլ մասնակիցներ, որոնք ճանաչում են աշակերտին կամ նրա մասին մասնագիտական գիտելիքներ ունեն՝ ծնողի/խնամակալի կամ Շրջանի հրավերով:

**Աշակերտ**

Երբ մշակվում է անհատական անցումային պլանը (ITP), աշակերտը կարող է հրավիրվել IEP թիմի հանդիպմանը:

**Կազմակերպության ներկայացուցիչ**

Ներկայացուցիչ կողմնակի կազմակերպությունից, որը հավանաբար ծառայություններ կմատուցի աշակերտին:*

**Բանավոր թարգմանիչ**

Շրջանի կողմից նշանակված որակավորված մասնագետ, եթե թարգմանչի ծառայությունների կարիք կա:

*Այլ կառույցների օրինակներ են, առանց սահմանափակման, խմբային բնակության հաստատությունների ներկայացուցիչները, ոչ հանրային դպրոցները, տարածաշրջանային կենտրոնները և/կամ վերականգնողական ծառայությունների վարչությունը:

## ՈՐՔԱ՞Ն ԿԱՐԵՎՈՐ Է ԱՇԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտի մասնակցությունը անցումային պլանավորման կարևորագույն բաղկացուցիչն է: Հարկավոր է աշակերտին գրավոր տեղեկացնել IEP թիմի հանդիպման մասին: Աշակերտը կարող է մասնակցել պլանավորմանը հետևյալ կերպ.

- ասել IEP թիմի անդամներին, թե ինչով է մտադիր զբաղվել ավագ դպրոցից հետո,
- ակտիվ դեր խաղալ IEP թիմի հանդիպումների ժամանակ՝ հարցեր տալով կամ վարելով հանդիպումը,
- լսել և պատասխանել թիմի հանդիպման մասնակից անդամներին,
- տեղեկություններ տրամադրել իր ուժեղ կողմերի, նախասիրությունների, հետաքրքրությունների և պահանջմունքների մասին,
- նպատակներ դնել և մասնակցել անցումային միջոցառումներին՝ նպատակներն իրագործելու համար,
- ուսումնասիրել տեղական ռեսուրսներն ու ծառայությունները:

***ՀՈՒՇՈՒՄ. աշակերտը պետք է զարգացնի որոշումների կայացման և շփման հմտությունները՝ IEP թիմի հանդիպումների ժամանակ ներկայացնելով ապագայի իր պլանները:***

## ՈՐՔԱ՞Ն ԿԱՐԵՎՈՐ Է ԾՆՈՂԻ/ԽՆԱՄԱԿԱԼԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ծնողի/խնամակալի մասնակցությունը հաջող անցումային պլանավորման կարևոր բաղադրիչներից է: Հարկավոր է ծնողներին/խնամակալներին գրավոր ծանուցել IEP թիմի հանդիպման մասին: Ծնողները/խնամակալները մասնակցում են հետևյալ կերպ.

- ակտիվ դեր խաղալ IEP թիմի հանդիպման ժամանակ՝ հարցեր տալով,
- IEP թիմին հաղորդել անցման առնչությամբ իրենց մտահոգությունները,
- հարցեր տալ անցումային գնահատման արդյունքներին մասին,
- օգնել աշակերտին անցումային միջոցառումներում՝ ներառյալ ITP-ում ներառվածները,
- դիմել աշակերտի դպրոցին նշանակված անցումային ուսուցչին տեղեկությունների և ռեսուրսների համար:

***ՀՈՒՇՈՒՄ. անցումային միջոցառումները կարող են ներառել ընտանիքի, դպրոցի, համայնքի և կողմնակի կառույցների մասնակցությունը: IEP թիմի հանդիպումներից առավելագույնը ստանալու համար ցանկալի է նախօրոք պատրաստվել դրանց:***

# ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ITP-Ի ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Անցումային պլանավորման արդյունքները գրանցվում են ITP-ում: Մասնավորապես գրանցվում է հետևյալը.

- Կատարված անցումային գնահատումները և դրանց արդյունքները, որոնք ցույց են տալիս աշակերտի ուժեղ կողմերը, նախասիրությունները, հետաքրքրություններն ու պահանջմունքները
- Հետմիջնակարգ նպատակները, որոնք առնչվում են ուսմանը, զբաղվածությանը և, եթե կիրառելի է, ինքնուրույն ապրելու հմտություններին
- Անցումային միջոցառումները, որոնց օգնությամբ աշակերտը կհասնի հետմիջնակարգ նպատակներին ուսման, զբաղվածության և, եթե կիրառելի է, ինքնուրույն ապրելու հմտություններում
- Մարդիկ, որոնք օգնում են աշակերտին կատարել անցումային գործողություններն ու միջոցառումները
- Դասընթացը կամ դասընթացները, որոնք աշակերտը անցել է կամ պետք է անցնի ավագ դպրոցն ավարտելու համար
- Ներգրավված կազմակերպությունները, եթե այդպիսիք կան

***ՀՈՒՇՈՒՄ. անցումային ծառայությունները պետք է համապատասխանեն աշակերտի ուժեղ կողմերին, նախասիրություններին, հետաքրքրասիրություններին և պահանջմունքներին***

## Ի՞ՆՉ Է ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Աշակերտի անհատական կարիքներին համապատասխանող ITP կազմելու նպատակով դպրոցը կօգտագործի տարիքին համապատասխան անցումային գնահատումներ, որոնք ներառված են ուսումնական ծրագրում: Անցումային գնահատման նպատակն է՝ որոշել աշակերտի անցումային կարիքները՝ հիմնվելով նրա հետաքրքրությունների և նախասիրությունների վրա: Անցումային գնահատման գործընթացը կարող է ներառել հետաքրքրությունների հարցաթերթերի լրացում, հարցազրույցներ, ուսումնական առաջընթացի ուսումնասիրություն և աշակերտի աշխատանքների նմուշների դիտարկում՝ որպես աշակերտի տվյալների շարունակական հավաքման գործընթացի մաս: Տարիքին համապատասխան անցումային գնահատման գործիքները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետաքրքրությունների հարցաթերթերով, հարցաթերթիկներով, ուսումնական ծրագրի վրա հիմնված գնահատումներով և գնահատման սանդղակներով: Տարիքին համապատասխան անցումային գնահատումները օգնում են IEP թիմի անդամներին տեղեկություն ստանալ հետմիջնակարգ կրթության, զբաղվածության, համայնքային մասնակցության և, անհրաժեշտության դեպքում, ինքնուրույն կյանքի հմտությունների վերաբերյալ: Գնահատման արդյունքները այնուհետև օգտագործվում են աշակերտի համար իմաստալից հետմիջնակարգ նպատակներ և անցումային միջոցառումներ մշակելու համար:

***ՀՈՒՇՈՒՄ. անցումային գնահատումներն օգնում են IEP թիմին տեղեկացված որոշումներ կայացնել աշակերտի ապագայի համար:***

## Ի՞ՆՉ ԵՆ ՀԵՏՄԻՋՆԱԿԱՐԳ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Դպրոցը տրամադրում է անցումային ծառայություններ, որոնք աջակցում են աշակերտին հասնելու իր հետմիջնակարգ նպատակներին: Հետմիջնակարգ նպատակները այն նպատակներն են, որոնց աշակերտը հույս ունի հասնել միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, օրինակ՝ քոլեջ հաճախել, մասնակցել մասնագիտական ուսուցման ծրագրի, աշխատանք գտնել կամ ապրել ինքնուրույն: IEP թիմը պարտավոր է աշակերտի ITP-ում ներառել հետմիջնակարգ նպատակներ կրթության և/կամ ուսուցման, զբաղվածության և, անհրաժեշտության դեպքում, ինքնուրույն կյանքի հմտությունների ոլորտներում:

## Ի՞ՆՉ ԵՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Անցումային գործողությունները գործողությունների համակցություն են, որոնք նախատեսված են օգնելու աշակերտին առաջընթաց գրանցել ITP-ում նշված հետմիջնակարգ նպատակների ուղղությամբ: Անցումային գործողությունները կարող են ներառել դասարանային կամ փոքր խմբերով ուսուցում, ուսումնական այցելություններ, աշխատանքի նախապատրաստում, առօրյա կյանքի հմտությունների զարգացում, ինչպես նաև հարակից ծառայություններ, օրինակ՝ էրգոթերապիա կամ ֆիզիկական թերապիա: Այն անձինք, որոնք պատասխանատու են այս միջոցառումներն իրականացնելու հարցում աշակերտին աջակցելու համար, կարող են լինել ուսուցիչները, ծնողները/խնամակալները, ընտանիքի անդամները, աշակերտը և դպրոցի այլ համապատասխան աշխատակիցներ: Երբեմն համայնքային կազմակերպություններն էլ են ներգրավվում անցումային միջոցառումների իրականացման մեջ:

## ԻՆՉՊԵ՞Ս Է ՀԱՄԱՅՆՔԸ ԿԱՊՎԱԾ ITP-Ի ՀԵՏ

Մի շարք տեղական կառույցներ օգնում են հաշմանդամություններով աշակերտներին և նրանց ընտանիքներին ստանալ անցումային ծառայություններ՝

- Վերականգնողական ծառայությունների վարչություն
- Տարածաշրջանային կենտրոններ
- Սոցիալական ծառայություններ մատուցող գործակալություններ
- Բարձրագույն ուսումնական հաստատություններ, օրինակ՝ համայնքային քոլեջներ
- Առողջապահական և հոգեկան առողջության կազմակերպություններ
- Համայնքային կազմակերպություններ

***ՀՈՒՇՈՒՄ. դպրոցի տարածքում աշխատող անցումային ուսուցիչները կարող են օգնել ծնողներին/խնամակալներին և աշակերտներին գտնել տեղական գործակալություններ, որոնք կաջակցեն անցումային պլանավորմանը և միջոցառումներին:***

## ՈՐՔԱ՞Ն ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ Է ԱՇԱԿԵՐՏԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼ

Անցումային ծառայությունները մատուցվում են այնքան ժամանակ, մինչև աշակերտը հասնի հետևյալից որևէ մեկին (կախված թե որն առաջինը կլինի).

**Ստանում է դիպլոմ***

**Հասնում է 22 տարեկանի, եթե դպրոցում է**

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԴԻՊԼՈՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Լոս Անջելեսի միասնական դպրոցական շրջանի կրթության խորհուրդը ժամանակ առ ժամանակ փոփոխում է շրջանի ավարտական պահանջները: Դրանք պետք է քննարկվեն յուրաքանչյուր IEP թիմի հանդիպման ընթացքում՝ վերանայելով աշակերտի ուսումնառության ծրագիրը:

| LAUSD դիպլոմի պահանջներ | Դիպլոմի պահանջներից ազատում |
|---|---|
| Դիպլոմ ստանալու համար աշակերտը պետք է՝<br><br>• ավարտի պարտադիր դասընթացները<br>• ավարտական տարվա համար վաստակի նվազագույն պահանջվող կրեդիտների քանակը<br>• կատարի տվյալ տարվա համար կիրառվող Կալիֆոռնիայի նահանգային բոլոր պահանջները<br>• բավարարի ոչ դասընթացային պահանջները (օրինակ՝ ծառայությունների ուսուցում, համայնքային ծառայություն և այլն)<br><br>Հաշմանդամություն ունեցող այն աշակերտները, որոնք ստանում են դիպլոմ, համարվում են ավարտած իրենց միջնակարգ կրթությունը և այլևս իրավասու չեն Շրջանի հատուկ կրթության ծառայություններ ստանալու: | Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրքը որոշ իրավասու խմբերի պատկանող աշակերտներին ազատում է Լոս Անջելեսի միասնական դպրոցական շրջանի դիպլոմ ստանալու այն պահանջներից, որոնք լրացուցիչ են նահանգային դասընթացային պահանջներին: Ազատումները նախատեսված են հետևյալ խմբերի համար.<br><br>• Հաշմանդամություն ունեցող այն աշակերտները, որոնք իրավասու են մասնակցելու Կալիֆոռնիայի այլընտրանքային գնահատմանը (ինչպես նշված է նրանց IEP-ում):<br>Այս բացառությամբ դիպլոմ ստացած աշակերտները կշարունակեն իրավասու լինել հատուկ կրթության ծառայությունների համար մինչև 22 տարեկանը լրանալը կամ մինչև առանց բացառության դիպլոմի համար նախատեսված դասընթացները ավարտելը:<br><br>• Խնամատար ընտանիքներում գտնվող աշակերտներ<br>• Անօթևանության մեջ գտնվող աշակերտներ<br>• Անչափահասների դատարանին կից դպրոցների նախկին աշակերտներ<br>• Զինվորական ընտանիքների երեխաներ<br>• Միգրանտ աշխատողների երեխաներ<br>• Նորեկների ծրագրում մասնակցող աշակերտներ<br><br>Դիպլոմ ստանալու համար աշակերտը պետք է համապատասխանի ավարտական նվազագույն պահանջներին, որոնք սահմանված են Կալիֆոռնիայի Կրթության վարչության (CDE) կողմից:<br><br>Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ https://www.cde.ca.gov/ci/gs/hs/hsgrmin.asp:<br><br>Աշակերտները պետք է կատարեն CDE-ի պահանջները՝ ստանալով առնվազն «D» գնահատական: |

## Ի՞ՆՉ Է ԼԻՆՈՒՄ, ԵԹԵ ԱՇԱԿԵՐՏԸ ՉԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ ԴԻՊԼՈՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Եթե աշակերտը չի արժանանում դիպլոմի, նա կարող է փոխարենը ստանալ ավարտական վկայական: IEP-ով աշակերտները կարող են ավարտական վկայական ստանալ՝ կատարելով հետևյալ պայմաններից որևէ մեկը.

- IEP-ում նշված այլընտրանքային ուսումնական ծրագրով նախատեսված կրեդիտների բավարար կատարում,
- ավագ դպրոցում ուսման ընթացքում IEP-ում սահմանված նպատակների բավարար իրագործում՝ ըստ IEP թիմի սահմանման,
- ավագ դպրոցում բավարար հաճախում, մասնակցություն IEP-ով նախատեսված ուսուցմանը և անցումային նպատակների իրագործում:

Հաշմանդամություններ ունեցող այն աշակերտները, որոնք բավարարում են ավարտական վկայական ստանալու պահանջները, իրավասու են մասնակցելու ավարտական մեկ արարողության և դպրոցի ավարտին առնչվող ցանկացած միջոցառման, որոնց իրավասու կլինեին մասնակցելու առանց հաշմանդամության աշակերտները:

Այն աշակերտները, որոնք ավարտական վկայական են ստանում, կարող են ձգտել դիպլոմ ստանալու և իրավասու են հատուկ կրթություն ստանալ մինչև 22 տարեկանը կամ մինչև դիպլոմ ստանալը:

## Ի՞ՆՉ Է ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐԸ

Արդյունքների ամփոփագիրը փաստաթուղթ է, որը ներկայացնում է ուսումնական առաջադիմության և ֆունկցիոնալ հմտությունների ամփոփ նկարագիրը, ինչպես նաև պահանջվող աջակցության առաջարկություններ, որոնց միջոցով աշակերտը կկարողանա հասնել իր հետմիջնակարգ նպատակներին: Արդյունքների ամփոփագիրը բացատրում է, թե ինչ աջակցություն և հարմարեցումներ են անհրաժեշտ աշակերտին, մինչ նա դպրոցից անցնում է հետագա կրթության, վերապատրաստման, զբաղվածության կամ ինքնուրույն ապրելու հմտությունների ձեռքբերման: Արդյունքների ամփոփագիրը հարկավոր է լրացնել աշակերտի վերջին IEP հանդիպմանն ընդառաջ, որն անցկացվում է ոչ շուտ, քան ուսումնական տարվա վերջին օրից 150 օր առաջ կամ երկարացված ուսումնական տարվա (ESY) վերջին օրը, եթե աշակերտը իրավասու է ESY ստանալու:

## Ի՞ՆՉ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ, ԵԹԵ ԵՍ ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՄ

- Ձեր դպրոցի տնօրենը, հատուկ կրթության անձնակազմը և անցումային ուսուցիչը
- Հատուկ կրթության ծառայությունների ծնողական ուղեցույցը (ներառյալ Ընթացակարգային իրավունքներն ու երաշխիքները)
- IEP-ն և Դուք



# ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**Հատուկ կրթության վարչություն**
**Վեբկայք՝** https://sped.lausd.org

**Անցումային ծառայությունների շրջանային գրասենյակ**
**Վեբկայք՝** https://sped.lausd.org/dots

**Դպրոցի և ընտանիքի աջակցության ծառայությունների (SFSS) գրասենյակ**
**Վեբկայք՝** https://lausd.org/spedContactUs
**Հեռախոս՝** (213) 241-6701
Այս գրասենյակը կարող է աջակցել հատուկ կրթության հետ կապված հարցերի, մտահոգությունների և/կամ բողոքների դեպքում, ինչպես նաև աշակերտի IEP-ի վերաբերյալ հարցերում: Ավելի մանրամասն տեղեկություն ստանալու համար այցելեք Հատուկ կրթության բաժնի կայքի *Contact Us* բաժինը:

**Ծնող–աշակերտ ձեռնարկը** առկա է Շրջանի բոլոր դպրոցներում: Այցելեք Շրջանի գործունեության կայքը:
**Վեբկայք՝** https://www.lausd.org/Page/16910

**Համայնքային տեղեկատվական հանձնաժողով (CAC)**
**Վեբկայք՝** https://www.lausd.org/Page/10285
CAC-ի պարտականությունները սահմանված են Կալիֆոռնիայի կրթության օրենսգրքով և ներառում են խորհրդատվական դեր հատուկ կրթության տեղական ծրագրի մշակման, փոփոխման և վերանայման հարցերում:

## Այլ ռեսուրսներ

**Կալիֆոռնիայի կրթության վարչություն (CDE)**
**Վեբկայք՝** http://www.cde.ca.gov
**Հեռախոս՝** (916) 319-0800

**ԱՄՆ կրթության դեպարտամենտ**
**Վեբկայք՝** https://sites.ed.gov/idea
**Հեռախոս՝** 1-800-872-5327

**Զարգացման ծառայությունների վարչություն (DDS)**
**Վեբկայք՝** https://www.dds.ca.gov/rc/
**Հեռախոս՝** 1-833-421-0061
DDS-ը վերահսկում է զարգացման խանգարումներ ունեցող Կալիֆորնիայի բնակիչների համար ծառայությունների համակարգումը և տրամադրումը՝ նահանգի ամբողջ տարածքում գործող 21 համայնքային, ոչ առևտրային գործակալություններից կազմված ցանցի միջոցով, որոնք հայտնի են որպես Տարածքային կենտրոններ (Regional Centers):

**Լոս Անջելեսի շրջանի California Children's Services (CCS) ծրագիր**
**Վեբկայք՝** http://publichealth.lacounty.gov/cms/ccs.htm **Հեռախոս՝** 1-800-288-4584
**Էլփոստ՝** CCS@ph.lacounty.gov
CCS-ը նահանգային ծրագիր է, որը համակարգում և ֆինանսավորում է որոշակի առողջապահական կարիքներ ունեցող մինչև 21 տարեկան երեխաների բժշկական օգնությունն ու թերապևտիկ ծառայությունները:

**Վերականգնողական ծառայությունների վարչություն** (DOR)
**Վեբկայք՝** https://www.dor.ca.gov/
**Հեռախոս՝** 1-800-952-5544 / TTY: 1-844-729-2800
Վերականգնողական ծառայությունների վարչությունը (DOR) օգնում է Կալիֆորնիայի անկարողություն ունեցող բնակիչներին ձեռք բերել և պահպանել աշխատանք, ինչպես նաև առավելագույնի հասցնել նրանց հավասար հնարավորությունները և իրենց համայնքներում ինքնուրույն ապրելու կարողությունը:

# IEP-Ի ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Սկիզբ

## Նախնական ուղեգրում

Ծնողը/խնամակալը և մասնագետները համագործակցում են՝ աշակերտի կարիքները բավարարելու համար ընդհանուր կրթության աջակցությունների միջոցով: Կարող է կազմակերպվել **Student Support and Progress Team (SSPT)** հանդիպում:

## Գնահատման հայտ

Հատուկ կրթության համար նախնական ուղղորդումը կարող է նախաձեռնվել դպրոցի կամ ծնողի/խնամակալի կողմից:

15 օր

## Գնահատման պլան

Դպրոցը գնահատման հարցման վերաբերյալ արձագանքում է 15 օրվա ընթացքում: Ծնողի/խնամակալի համաձայնությունից հետո սկսվում է գնահատումը:

## Գնահատում

Շրջանի որակավորված մասնագետները գնահատում են աշակերտին ենթադրվող հաշմանդամության բոլոր ոլորտներում:

60 օր

## IEP թիմի հանդիպում

*IEP հանդիպմանը մասնակցելու մասին ծանուցում* է ուղարկվում ծնողին/խնամակալին: Կազմակերպվում է IEP թիմի հանդիպում՝ գնահատման արդյունքները վերանայելու համար: Մշակվում է IEP փաստաթուղթը և որոշվում են իրավասությունը, նպատակները, ծառայությունները, աջակցությունները և տեղաբաշխումը:

## Ծնողի/խնամակալի համաձայնություն

IEP-ը չի իրականացվի առանց համաձայնության: Համաձայնությունը կարող է տրվել ամբողջությամբ կամ մասնակիորեն:

## IEP-ի իրականացում

IEP-ով նախատեսված ծառայություններն ու աջակցությունները կսկսվեն հնարավորինս շուտ՝ ծնողի/խնամակալի համաձայնությունից հետո:

1 տարի

## Տարեկան վերանայում

IEP թիմի հանդիպումը կանցկացվի առնվազն տարին մեկ անգամ՝ առաջընթացը վերանայելու և, անհրաժեշտության դեպքում, իրավասության, նպատակների, ծառայությունների, աջակցությունների և տեղաբաշխման փոփոխությունների քննարկելու համար:

## Աշակերտի հաջողություն

Նշում. ծնողը/խնամակալը կարող է ցանկացած ժամանակ դիմել IEP թիմի հանդիպում կազմակերպելու խնդրանքով, եթե դա անհրաժեշտ է համարում: Այս հանդիպումը պետք է անցկացվի դիմումը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: